ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 407-Ա 28 հուլիսի 2025 թ.

ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՋՈՎԱԲԵՐԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-ին և 39-րդ կետերի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 7-ի N 316 արձանագրությունը (2025 թվականի հուլիսի 22-ի Ն/2749-2025), ինչպես նաև Անահիտ Խաչատրյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Անահիտ Խաչատրյանին 2025 թվականի հուլիսի 28-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով (25.07.2025-25.07.2030թթ.):

2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուբիկ Բարսեղյանին:

3. Փորձաշրջանի ղեկավար Ռուբիկ Բարսեղյանին՝ առաջնորդվել կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով:

28.07.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ